Խօշ եար, արեւո՛ւդ համար, որբո՛ւկ եմ. զիս մի՛ լացըներ.
Տըղայ եմ, չեմ ի կենար, զիս ի քո կրակըն մի՛ ձըգեր:

Կ Բ.

Խօշ եար, դու հերիք արա՛, քո սիրուդ հոգիս կու քակի.
Արե՛կ յայլ աշխարհ երթանք, այս աշխարհ մեզի չըպիտի.
Երթանք յայլ աշխարհ կենանք, որ անվախ կենանք ալանի.
Քանի՛ տեղս ահով կենանք ու դողանք թէ ի՞նչ կու լինի:

Կ Գ.

Քան զսէրն այլ քաղցրիկ պըտուղ ի յաշխարհս չաւտամ թէ լինի.
Շէքէրըն նըշով շաւղած, մօտ ի սէրն է դառն ու լեղի:
Ըզհամք ալ առի ես այլ, սիրոյ տէր եղայ հետ քեզի.
Սէրդ ալ իմ սըրտիս դու տուր, քո սիրուդ եմ ճորտ ու գերի:

Կ Դ.

Հոգե՛կ, թէ տայիր տէսթուր, որ զծոցիկդ ի յետ բանայի,
Ձծոցիկդ ալ պաղ անէի, տէսթուրով ի ներս մըտնէի,
Երդուի, երդում տայի, անտէսթուր ի դուրս չըգայի.
Այն ի՞նչ անհաւատ գըրօղ, զիս ի քո ծոցուդ գայ տանի:

Կ Ե.

Կանա՞նչ ու կարմիր ամիս, մի՛թէ մա՛յրըն չէր բերեր զիս.
Իբեր սիրոյ տէր արաւ, այս քաղքիս՝ այս հմնաւիրիս:
Երկու երիկ կու սիրեմ, երկուսին սիրտըն կ՚ուզէ զիս,
Պըզտիկն «առաւե՛լ» կ՚ասէ, մեծն ասէ «Արե՛կ մօտ ի յիս»:

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Դու ծառ ես նարընջենի, – քեզ հազար անուն կու պիտի, –
Որ մէկն է ի հասք եկեր, մէկ ծաղկեր, մէկ դեռ, կու ծաղկի:
Դու բարձր ես բերդի նըման, հաւ ի քոյ վերայ չանցընի:
Ոսկի կայ ի քոյ միջին, ոսկերիչն ի ներս կու բանի.
Ծառայ ոսկերչին լինիմ որ զոսկին ի բան կու տանի:

Բ.

Ես աչք ու դուն լուս, հոգի՛, առանց լուս աչքըն խաւարի,